առաջնորդ կացոյց: Զի ոչ ունէի զաւակ, յուսով խնդրեցի զայս եկեղեցի՝ ինձ չիրիմ հանգստեան. Աւագն ինձ երետ...»[192]*: Թէ-պէտ արձանագրութիւնն անթուակիր է եւ Կ. Կոստանեանցի կողմից վրիպմամբ վե-րագրուել է 1198-ին, սակայն իրականում նրա ժամանակը պէտք է յաջորդի Իւանէ ամիրսպասալարի մահուանը*[193] *եւ նախոր-դի Հեջուբի կառուցած Գօշավանքի Ս. Գրիգոր հոյակերտ կաթողիկէի աւարտին, այսինքն՝ թուագրուի 1233/1234-1237 թթ. միջակայքով (վերջին կոթողի շինարարա-կան վնասուած երկտող վիմագրի առաջին տողում մասնաւորապէս ընթերցւում է. «Ի Թվ^{ին} :ՈՁԶ:* [=1237 թ.]. *ես՝ Գրիգոր, որդի Սմպատա{յ...}»*[194]*): Հետագայում Գրիգոր Հեջուբն, այնուամենայնիւ, ունեցել է որ-դիներ. Նրանցից Սմբատը (իր պապի անու-նը կրող, կինը՝ Թամար)՝ Մեծարանից Ս. Յակոբավանքի սրահի հարաւային պատի արեւմտեան մասում թողած 10 տողանոց նուիրատուական վիմագրում ասում է. «Թագ[աւ]որ Ջալալայ Դովլին հրամանով ես՝ Սմպատ, որդի Հեջբին, տվի էգատեղ Գրիգորոյ...»*[195]*, իսկ Մուշեղը՝ նոյն վանքի գաւթի արեւելեան պատին թողած 10 տո-ղանոց արձանագրութեան մէջ՝ «Ես՝ Մու-շեղ, որդի Հեջբին, միաբանեցա ս^{ուր}բ ուխ-տիս... Թվ^{ին} :ՉԽԲ:* [=1293 թ.]»[196]*: Այսպի-սով, վերը քննարկուած հարցադրման հա-մար*[197] *այս տարբերակով պարզ է դառ-նում, որ աւելի հաւանական է Վախտանգ Տանգիկի եւ Խորիշահի երրորդ որդի Դօլա-Սմբատի՝ 1212 թուականից շատ աւելի վաղ ծնուած լինելը:*

Արդ, Զաքարէ Վախտանգեանի ա-նուան Սակառ *ձեւն էլ (արաբ.՝ «որսի բա-զէ»), թերեւս, ոչ այլ ինչ էր, քան* *Զաքառ *անուան մի տարբերակ: Նաեւ՝ իբրեւ վար-կած, մեր կարծիքով՝ բացառուած չէ, որ տուեալ անուանաձեւը հանդէս է եկել դե-ռեւս Հասան Ջալալ եւ Զաքարէ-Սակռ եղ-բայրների մօր՝ Խորիշահ Զաքարեան-Եր-կայնաբազուկի հօր՝ Սարգիս ամիրսպասա-լարի պապ Զաքարէ Ա-ի ժամանակ: Այդ դէպքում բացատրելի կը լինէր Վարդան պատմիչի կողմից Վախտանգ [Տանգիկ]ին «Սակռեան» կոչելու հանգամանքը*[198]*, որը կարող էր կապուած լինել վերջինիս կնոջ՝* Սակռեան-Զաքարեան *լինելու իրողութեան հետ (հմմտ. նոյնպէս կնոջ առիթով* Դօ-փեան *ձեւի առաջացման զուգորդութիւնը):*

192 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. VI, *Իջեւանի շրջան*, էջ 70 (N 140), լուսանկարը՝ տախտ. ԼԲ:

193 Այս խնդրի եւ Գրիգոր Հեջուբի գործունէութեան մանրամասն քննութիւնը տե՛ս նաեւ **Բ. Ա. Ուլու-բաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 197-201:

194 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. VI, էջ 105-106 (N 236), լուսանկարի մի մասը՝ տախտ. ԽԸ:

195 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 15 (N 12): Հմմտ. նաեւ վանքի սրահի մէջ արեւելեան եկե-ղեցու արտաքին պատի վրայի խիստ վնասուած 9 տողանոց վիմագրում (նոյն տեղում, էջ 14, N 8), որի առաջին տողում յստակ ընթերցւում է «Թվ^{ին} :ՈՂԹ: էր *[=1250 թ.]*», ապա երկրորդում՝ «ԵՍ՝ ՍՄ{...}», որից կարելի է վերականգնել ՍՄ*{ՊԱՏ}* անունը (Ս. Բարխուդարեանը ենթա-դրում է ՍՏ*{ԵՓԱՆՈՍ}*-ի հնարաւորութիւնը): Նոյն պատին, մուտքի մօտ պահպանուել է նաեւ Սմբատի Վարհամ եւ Հասան որդիների 16 տո-ղանոց նուիրատուական վիմագիրը. «Թ^{ուին} :Չ: *[!? =1251 թ.]*. Ջալալին հրամանաւ, ես՝ Վար-համ, Հասան, որդիք Սնպատա, տվաք զՙՆովա-տեղին հողն մեր հոգոյն ի Մեծիրենց աթոռս. Տ^{էր} Վ^{ար}դ^{ան}, միաբա^{ն}քս տվին :Գ: ժամ Վարդէ-վառին, :Ա:՝ Հասանա, :Ա:՝ Սնպատա, :Ա:՝ Թա-մարի...» (նոյն տեղում, էջ 14, N 10): Այս բնա-գրի թուականի մէջ, անկասկած, պակասում է գոնէ տասնաւորը (*Խ*, *Ծ*, *Կ* կամ *Հ*), քանի որ Ջալալ իշխանն իր հօրը՝ Իւանէ Աթաբակին փո-խարինել է նրա մահուանից յետոյ, ըստ Ստե-փաննոս եպիսկոպոսի տարեգրութեան՝ 1287 թ. (*Մանր ժամանակագրութիւններ*, հտ. Ա, կազ-մեց **Վ. Ա. Յակոբեան**, Եր., 1951, էջ 48): Ենթա-դրելի է, որ այդ տասնաւորը փորագրողի կող-մից է վրիպուել՝ իր ունեցած «պատուիրաթղթի» բնագիրը քարի վրայ փոխադրելիս :

196 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 16 (N 16):

197 Տե՛ս վերեւում, ծնթ. 94:

198 **Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ** *Պատ-մութիւն տիեզերական*, էջ 184: